ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/17, 07.02.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ Աշոտ Բաբիկի Հովհաննիսյան

Պատվիրատու՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխել տեխնիկական բնութագիրը՝ դիալեզատորի անվանումից հետո նշել «կամ համարժեք» բառերը, մանրէազերծման մեթոդը նշել շոգով կամ ավտոկլավի միջոցով:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

ԲՈՂՈՔ ԲԵՐՈՂ

ԱՇՈՏ ԲԱԲԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(հասցե՝ Կոտայքի Մարզ, գ. Գառնի 4-րդ թաղ. 1-ին փող. 26 տուն)
096919290

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ԳՈՌ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(հաշվառման հասցե՝ ք. Երևան, Եղիազարյան 28, ծանուցման հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 2շ 430 տարածք, նույանականացման քարտ՝ 009115015, տրված՝ 18.12.2017թ. 013-ի կողմից, փաստաբանական գործունեության արտոնագիր՝ 1898, հեռ՝ 077 10-50-66 էլ. փոստ՝ grigoryangor@mail.ru)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
(հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Բանակի 8)

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԾԱԾԿԱԳԻՐԸ

«ՎԲԿ-ԷԱՊՁԲ-19/17» «ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ»-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

ԲՈՂՈՔ

1. *ԳՈՐԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՓԱՍՏԵՐԸ՝*

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՎԲԿ-ԷԱՊՁԲ-19/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ մրցույթ):

Գնահատող հանձնաժողովի 31.01.2019թ-ի N1 որոշմամբ հաստատել և հրապարակել է հրավերի տեքստը:

Հրավերում առկա տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն կազմված է խտրական և նպատակ է հետապնդում արհեստականորեն սահմանափակել հնարավոր այլ մասնակիցների մասնակցությունը և բացառել մրցակցությունը:

2. *ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

4676-18
05.02.2018

առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված տեխնիկական բնութագիր կազմված է խտրականության սկզբունքով, ինչի առկայության պայմաններում, սահմանափակվում է այլ մասնակիցների հնարավոր մասնակցությունը: Մասնավորապես չափաբաժին №1-ում ուղղակի հղում է կատարված կոնկրետ մոդելին և առանց նշելու կամ համարժեք բառերը:

Ուղղակի հղում է կատարված նաև մանրէազերծման մեթոդի մասով՝ նշելով «մանրէազերծման մեթոդը INLINE շոգով» Ընդ որում «INLINE» տերմինը հանդիսանում է միայն «Fresenius Medical Care GmbH» կողմից կիրառվող տերմին՝ ավտոկլավի միջոցով դիալիզատորների մանրէազերծման մեթոդը նկարագրելու համար: Բացի այդ, ավտոկլավով մանրէազերծված դիալիզատորները համարժեք են ռադիացիոն մեթոդով մանրէազերծված դիալիզատորների հետ դրա մասին է վկայում նաև մի շարք փորձագիտական խմբերի, մասնագիտացված բժշկական կենտրոնների, կլինիկաների ներգրավմամբ իրականացված վերլուծությունը, որը կարող ենք տրամադրել ըստ անհրաժեշտության:

Արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի մասի դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 46-ից 48-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով

խնդրում եմ

բողոքը բավարարել, այն է՝ պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխել տեղնիկական բնութագիրը դիալեզատորի մոդելի անվանումից հետո նշել «կամ համարժեք» բառերը, մանրէազերծման մեթոդը նշել շոգով կամ ավտոկլավի միջոցով:

Կից ներկայացնում եմ

1. Լիազորագիր,
2. Թիվ 1898 արտոնագրի պատճենը,
3. Բողոքարկման վճարի անդորրագիրը,
4. Բողոքաբերի նույնականացման քարտի պատճենը:

ԲՈՂՈՔ ԲԵՐԻՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ԳՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆ

07.02.2019թ.

2թ, 5թ.